

Հայոց մշակ
Քրոնիկա
ԺՈՂՈՎՐԴԱՎԿԱՆ



ՀԵՖԻՎԱԹԵՄԵՐ

891-5705
Հ-34

Հայոց քրոնիկ



30 MAY 1940

894.57.05.
Σ-34
42

ՀԱՅԻ ԶԵՂԻ

ՔՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔՑԱԹՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿԱՑՈՒՅՑ ԿԱՆԱԿ-ՊԱՏԱԽԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵԿԱՆ

1940

ՅԵՐԿՈՒ ԱՂՎԵՍ

Մի անգամ յերկու աղվես ընկերացան:
 Մի որ աղվեսներից մեկն ասաց մյուսին.
 — Յեղբայր, դու քանի՞ հնարագիտություն գիտես:
 Հնկերը պատասխանեց.
 — Յես գիտեմ քառասուն հնարագիտություն, իսկ դու
 քանիսը դիտես:
 — Յես ել յերկուսը գիտեմ:
 Այդ ժամանակ քառասուն հնարագիտություն խմացողն
 ասաց.
 — Վար այդպես ե, դու ինձ ընկեր չես կարող լինել:
 — Ինչո՞ւ չեմ կարող, — զարմացած հարցրեց առաջին աղ-
 վեսը:
 Յերկրորդ աղվեսը պատասխանեց.
 — Շատ պարզ, յես քեղանից գիտուն եմ. դու միայն
 յերկու հնարագիտություն գիտես, իսկ յես՝ քառասունը:

* * *

Այդ որվանից աղվեսներն իրարից բաժանվեցին, բայց
 յեղավ մի որ, վոր նրանք նորից իրար հանդիպեցին. Այս
 անգամ քառասուն հնարագիտություն խմացող աղվեսը
 գտնվում եր թակարդում:

Յերկու հնարագիտություն խմացող աղվեսը տեսնելով
 նրան, ասաց.

— Յեղբայր, այդ ինչ եմ տեսնում, եղ ինչ որի յես
 ընկել:

Այդ ժամանակ աղվեսը թակարդի միջից պատասխանեց.

1535

41

Աճիշ Ջինդի
ԿՈՐԴՏԿԻ ՆԱՐԴՆԵ ԾԿԱԶԿԻ
Արմեա, Երևան
1940



— Ել ի՞նչ հարցնելու ժամանակ ես գտել. կորած ի՞մ,
հնար ունես՝ տես:

Առաջին աղվեսը մի քիչ մտածելուց հետո ասաց.

— Յեղայր, մի մտածի, հնարը գոռա:

Արի մենք սատկած ձևանանք, դու այդուեղ քո թա-
կարդի մեջ փոփիր, իսկ յես ել քեզանից մի քիչ հետու:
Յես գիտեմ քիչ հետո վորսորդը պիտի դա և քեզ թա-
կարդից հանի. հետո նա պիտի հետ դառնան նույն ճանա-
պարհով, վորտեղ յես կլինեմ պառկած: Հենց վոր ինձ
տեսնի, շատ կուրախանա, քեզ կդնի գետին և կվաղի
գեղի ինձ, վոր վերցնի: Այն ժամանակ դու քո տեղից
կփախչես, յես ել իմ տեղից և աբրականվ յերկուսս ել
կազատվենք վորսորդի ձեռքից:

— Կեցցես,—ասաց քառասուն հնարագիտություն
իմացող աղվեսը,—լավ հնար ե, արդպես ել կանենք: Յե-
րանի յես ել քեզ նման յերկու լավ հնարագիտություն
իմանայի, քան թե այսպիսի քառասունը, վոր ինձ այս
որին հասցըեց:



ԱՂՎԵՄՆ ՈՒ ԱՌՅՈՒԺԸ

Մի որ աղվեսը գնաց առյուծի մոտ, ասաց.

— Յեղայր առյուծ, արի ընկերանանք ու միասին
վորս անենք, ապրենք:

Առյուծը շատ ուրախացավ. աղվեսի հետ ընկերացավ,
նրանք սկսեցին միասին ապրել ու միասին վորս տներ
Աղվեսն առյուծի ուժը տեսնելով՝ մի որ ինքն իրեն տ-

սաց. «Պետք ե առյուծից ազատվել, թե չե սա վորձանք
կբերի գլխիս»:

Մի անգամ, յերբ աղվեսն ու առյուծը դուրս յեկան
վորսի, աղվեսն առջեկց եր գնում, առյուծին կամաց-կա-
մաց տարավ հասցրեց մի բարձր ժմուխ գլուխ և այնահեղ
կանգ առնելով՝ չորս կողմը նայեց ու խոր ափ քաշեց:

Առյուծն ասաց.

— Յեղբայր, ինչու այդպես ափ քաշեցի՞լ:

— Են, — ասաց աղվեսը, — աչքերս կուրանային, ախր,
յես ու քո հանգուցյալ հայրը շատ սիրով յեղբայրներ
էինք: Մենք գալիս եինք այս ժամանակի վրա բարձրանաւմ:
Հայրդ այս ժամանակից թոշում եր ներքե, աչքերս կուրա-
նան, ենպես եր թոշում, ինչպես թեթև մի ծիս:

Առյուծն ասաց.

— Յեղբայր, եղան նո յետ ել կարող եմ:

Աղվեսն ասաց.

— Յեղբայր, յեթե դու կարողանաս այնպես թռչել,
ինչպես քո հանգուցյալ հայրն եր թոշում, այն ժամանակ
հենց կիմանամ, թե նու սադ ե ու չի մեռել:

Առյուծը հպարտացավ, յետ-յետ գնաց, ուժ հավաքեց
և հանկարծ բարձր ժայռից իրեն զցեց ներքե: Ներքե ընկնելով
վոտները ջարդեց և ուշագնա պառկած եր: Աղվեսը հենց
իմացավ, թե առյուծը մահացել է, ուրախ-ուրախ վրա
վագեց, վար առյուծին անուշ անի: Առյուծը հանկարծ
նրան իր յերկու թաթերի մեջ առավ, ասելով:

— Խորամանկ աղվես, այս եր քո յեղբայրությունը,
հա... — ու սկսեց աղվեսի կոկորդը ճգմել:

Աղվեսն սկսեց կեղծավոր լեզու թափել, թե ինքը
չեր ուղում, վոր առյուծն եղ որին ընկներ: Բայց առյուծն
այլիս չհամատաց նրա խոսքերին: Ու աղվեսն իր մահը
առյուծի վերաբոր թաթերի մեջ գտավ:

ԱՂՎԵՍԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ

Փամանակով աղվեսը գայլից շատ եր վախենում: Մե
որ մտածեց, թե ինչպես անի, վոր փորձանք բերի գայլի
գլխին, վեր կացավ, գնաց նրա մոտ, ասաց.

— Գայլ ջան, արի յեղբայրներ դառնանք:

— Լավ ես ասում, — ասաց գայլը, — բայց քեզնից
ինձ ինչ ոգուտ:

Աղվեսն ասաց.

— Ինչպես թե, ինչ ոգուտ, բնոր գյուղերը մանելու
վկայական ունեմ, վոր գյուղն ուզենամ կմտնեմ, շներն
ինձ չեն դիպչի: Յես ըեզ կտանեմ գյուղերի մոտ, շները
մեզ վրա չեն հարձակվի, դու ել ամեն գյուղից մի վոչ-
խար կփախցնես, կբերես, անուշ կանենք:

— Գայլը մտածեց, ասաց.

— Լավ ես ասում, քանի վոր այդպիսի վկայական
ունես, արի յեղբայրանանք:

Այդպիսով, աղվեսն ու գայլը յեղբայրացան, մի քանի
որ իրար հետ հաշտ ման յեկան: Մի որ ել աղվեսն ասաց
դալին:

— Գայլ յեղբայր, արի գնանք ես մոտիկ գյուղի մոտ,
տեսնենք մի բան չենք կարող բերել:

Գայլը համաձայնեց, վեր կացան գնացին: Աղվեսը
նրան տարավ գեպի այնպիսի մի գյուղ, վորտեղ շները
շատ ելին: Հենց վոր նրանք մոտեցան գյուղին, գյուղա-
ցիները շներին քըս տվին գայլի յետեկց, իրենք ել դա-
դանակները վերցրած վագեցին: Աղվեսն առջեկց եր փախ-
չաւմ, գայլը, յետեկց, գայլը բղավում եր,

— Յեղբայր, վկայականդ հանիր...



Բայց ինչ վկայական, ինչ բան։ Աղվեսը փախավ, լայլը մնաց շների մեջ, նրա բուրդը զգեցին ու հազիվ կարողացավ ազատվել։

— Լավ, խորամանկ աղվես, — վինթվնթաց զայլն ու սպառեց մինչև լուսանալը։

Աղվեսը տեսավ հեռվից գայլը որորվելով, շշմած գալիս ե, ասաց։

«Յես զայլին խարեցի, այս անդամ գայլն ինձ կուտիւ։ Մտածեց, մտածեց, վեր կացավ գնաց գայլին դիմավորելու, գալը դայրացած կանչեց։

— Խորամանկ աղվես, ինձ փորձանքի մեջ գցեցիր, ինքդ փախանք։ Դու վկայական չունես, սուտ եյիր ասումք Աղվեսն ասաց։

— Վույ, քոռանամ, գալլ յեղբայր, այդ ինչեր ես ասում։ Գայլն ասաց։

— Հապա ինչո՞ւ չեյիր ցույց տալիս վկայականդ։ Աղվեսն ասաց։

— Տունդ քանդվի, այդ ըոպելին քարտուղար վնրտեզից բերելի, — այն ել այդ բարձունքի վրա։ Մինչև քարտուղարը գար վկայականը կարդար, շները քեզ ել կուտեցին, ինձ ել դրա համար ել վկայականը ցույց չտվի։ Գայլը պարտված ձախով ասաց։

— Յեղբայր աղվես, լես մեղա, դու ճիշտ ես ասում։

Ք Զ Ր Ք Ա Ն Ո Ւ Ն

Ժամանակով Քզրքանուն անունով մի մարդ երինում եղ մարդը աղեսից շատ ել վախենում, դրա համար ել ատմից իսկի դուրս չի գալիւ։

Մի անգամ Քղրքանունի կինը միտք ե անում, միտք,
թե ինչպես անի, վոր Քղրքանունը տանից դուրս դա, դործ
անի, թե չե՛ եղան ապրել չի լինի: Վեր ե կենում մի
քանի գաթա թխում, գաթաները տանում տան կտուրը և
իբ յերեխալին ասում:

— Յես կդնամ ներս, իսկ դու յերթիկից գաթաները
մեկ-մեկ ներս դցի:

Մայրը գնում ե տուն, իսկ յերեխան յերթիկից գա-
թաները ներս ե գցում:

— Քղրքանուն, վեր կաց, յերթիկից գաթաներ են
թափում, գնանք, հավաքենք,—ասում ե կինը:

— Այ կնիկ, դու գնա դրսից հավաքի, յես ե՛լ ներ-
սինը,—պատասխանում ե Քղրքանունը:

— Տունդ քանդվի, ներսի յեղաճները ներսումն են,
գնանք գրսի գաթաները հավաքենք,—ասում ե կինը:

Կինը մեծ դժվարությամբ Քղրքանունին շեմքից դուքս
ե տանում: Հենց վոր Քղրքանունը վոտը դուրս ե դնում,
կինը ներս ե մտնում, դուռը փակում:

Քղրքանունը շատ ե աղաջում, պաղատում, վոր կինը
դուռը բացի, ինքը ներս գնա, բայց լսող չի լինում:
Վերջը Քղրքանունը ստիպված հնտը մի քիչ հաց ե վերցնում
ու ճանապարհ ընկնում: Շատ ե գնում, թե քիչ, մի քոշկ
ու սարայի յե հանդիպում: Ներս ե գնում, տեսնում յոթը
մարդու անկողիններ են փոփած: Քղրքանունը գնում ե մի
անկողի վրա նստում: Դու մի ասա, այդ քոշկ ու սա-
քան պատկանում ե յոթը դեերին: Յոթն ել յեղբայրներ
եյին: Դեերը գնացել եյին վորսի: Նրանք սովորություն
ունելին ամեն յերեկո յեղբայրներից մեկին առաջուց ու-
ղարկել տուն վորպեսզի իրենց համար ճաշ պատրաստի:

Այդ որն ել դեերից մեկը դալիս ե և ինչ տեսնի...
մի մարդ նստել ե անկողի վրա:

Դեր բարեւմ ե Քղրքանունին:

Քղրքանունը պատասխանում ե զմի բարեկն, և տեղ
ցույց տալիս, վոր նա նստի: Դեր նստում ե մի քիչ, հետո
լուռ ու մունջ վեր կենում, ճաշի պատրաստություն ե
տեսնում: Գործը վերջացնելուց հետո գնում ե յեղբայր-
ներին դիմավորելու: Յերբ յեղբայրները գալիս են, ասում ե-

— Յեղբայրներ, մի փահլեան ե յեկել մեր տուն և
մեր անկողիններից մեկի վրա նստել: Յերբ ներս մտա, նա
տեղից վեր չկացավ: Ել չեմ իմանում յեկել ե մեզ հետ
կովելու, թե վորպես հյուր ե յեկել:

Մեծ յեղբայրն ասում ե.

— Յեղբայր, մենք կդնանք, կփորձենք, տեսնենք
ինչ ուժի տեր ե:

Յոթը յեղբայրներն ել գնում են ներս, Քղրքանունին
բարեւմ ու նստում, նրան պատիվ անում:

Քղրքանունն ասում ե.

— Յեղբայրներ, յես ինքս փահլեան եմ, յեկել եմ
ձեզ մոտ, ուղում եմ ձեզ հետ ապրել:

Մեծ յեղբայրն ասում ե.

— Դու մեր աշքի վրա, գլխի վրա տեղ ունես, յոթ
չլինենք, թող ութ յեղբայր լինենք:

Դեերը մի անտառ ունեյին, ամեն որ նրանցից մեկը
գնում եր այնտեղից մի շալսկ ցախ բերում, վառում ելին:
Մի որ Քղրքանունն ասում ե.

— Յեղբայրներ, պարանն ինձ տվեք, յես ել գնամ
ցախ բերեմ:

Դեերը պարանը տալիս են Քղրքանունին, նա վեր ե
կենում գնում անտառ:

Դե, Քղրքանունը ծառի մի ճուղ ել չեր կարող վերց-
նել բերել, ել ուր մնաց մի շալսկ ցախ, իսկ յեթե դեերն
իմանային նրա ուժի մասին, են ժամանակ հո կորած եր:

Մտածում ե թե ինչ անի: Մտածում ե, մտածում,
Քղրքանունը պարանի մի ծայրը մի ծափց ե կապում
ու վերադառնում դեերին ասում.

— Յեղբայրներ, պարանը կարճ ե, մի լերկար պարան տվեք, մի շալակ ցախն լինչ ե վոր. յես ուզում եմ ամբողջ անտառը մի անդամից շալակել բերել, ել ինչու իզուր տեղը ամեն որ չարչարվենք:

Մեծ գեր դառնում ե, ասում.

— Յեղբայր Քղրքանուն, մեր անտառը մեզ հով ե անում, յեթե տեղահան անես, մենք առանց անտառի կմանք: Խնդրում ենք չզնաս, թող մեր յեղբայրներից մեկը գնա քո փոխարեն մի շալակ փայտ բերի:

Հետո գեերը նայում են իրար ու ասում.

— Այս ինչ փորձանք ե սարջում սա մեր գլխին, ուզում ե անտառը տեղահան անել: Զինի թե իրա նման ընկերներ ունի, ուզում ե նրանց համար ճանապարհ բացի, վոր գան մեզ սպանեն:

Դեերը յերեկոյան մի տեղ են հավաքվում խորհրդակցելու, բայց Քղրքանունն ել ամեն քայլափոխին նրանց հետեւում ե, թե ինչ են խոսելու: Դեերն ունելին յոթ կացին, ասում են. «Կացինները կորենք, գիշերը, յերբ վոր նա քնած կլինի, վեր կկենանք կացիններով կտոր-կտոր կանենք, նրանից կազմակենք»:

Յերեկոյան ամենքը գնում են իրենց տեղերում քնում, իսկ Քղրքանունը վեր ե կենում մի հաստ կոճղ բերում գնում իր անկողնու մեջ, ինքն ել գնում, մի անկյունում թագնիում:

Կես գիշերին գեերը քնից վեր են կենում, կացինները վերցնում ու կամաց գալիս նրա անկողնի մոտ, կանգնում ու սկսում ուժեղ թափով կացիններն իջեցնել տեղաշորի վրա:

Ենքան կացիններով խփում են են հաստ կոճղին, վոր կոճղը փշուր-փշուր ե լինում: Դրանից հետո գնում են նորից իրենց տեղերում քնում:

Առավոտան գեռ լույսը չբացված՝ Քղրքանունը դեղին ձայն ե տալիս,

— Յեղբայրներ, այս գիշեր լվերն ինձ կերանք եղ վոր գեերն իմանում են, լեղիները պատովում ե, վանց թե Քղրքանունը չի մեռել: Դեերը տեսնում են, վոր ճար չկա, մի կոտ վոսկի ունեյին, բերում են նրա առջև դնում, ասում:

— Յեղբայր, զու մեր մեծն ես, ես վոսկին քո բաժինն ե, արի, վոսկին առնք քեզ ու բաժանվենք:

Քղրքանունն ասում ե.

— Լավ, յես ել եմ ուզում կստեղից գնալ—տանստեղիս կարուել եմ:

Դեերն առավոտյան վեր են կենում, Քղրքանունին ճանապարհելու պատրաստություն տեսնում, մի յեղբօրն ել նրա հետ զնելով, ասում են.

— Յեղբայր Քղրքանունին կշալակես, կտանես մինչև իրա տունը:

Դեը Քղրքանունին շալակում ե և ճանապարհ են ընկնում:

Դեը լուռ ու մունջ նրան տանում, հասցնում ե իր տուն:

Քղրքանունից ազատվելով դեն սկսում ե վախչել ու ճանապարհին հանդիպում ե մի աղվեսի: Աղվեսն ասում ե.

— Դե, ինչու յես վախչում:

Դեն իր գլխի յեկածը նրան պատմում ե:

Աղվեսն ասում ե,

— Յեղբայր, յոթ տարի յե Քղրքանունն իմ սարսափից տնից գուրս չի գալիս, հիմա յեկել ե ձեզ խարեր ձեզնից վոսկի յե վերցրել: Գնանք, վոսկիները հետ վերցնենք, կեսը քեզ, կեսն ինձ:

Աղվեսը տեսնում ե, վոր գեր վախենում ե, ասում ե.

— Վոր զու այդպես վախենում ես, արի իմ վոտքը ամուր կապիր քո վոտքին, ու գնանք, յեթե յես քեզ խաբեցի, զու ինձ սպանիր:

Ալին գլուխ եւ տալիս թագավորին և դուրս գալիս ձամապարհին լաց եւ լինում, գլխին տալիս Գալիս եւ տուն, կնոջ վրա բարկանում, ասում:

— Այ կնիկ, յես թագավորի մոտ ինչ զործ ունեի, դու ինձ զուով նրա փահեանը դարձրիր, հիմի ասում եւ թե Ալի-աղա, գնա առյուծ բռնի:

Կին ասում ե.

— Հեչ մի մտածի:

Շարիբանը վեր եւ կենում, մի պարան եւ բերում, սապնում, ողակ անում, ծայրը կապում սյունին, մյուս ծայրն ել ձեռքին բռնում: Մեկ ել լսում եւ ահեղ մոնշով առյուծն եւ հեռվից գալիս ուղիղ զեպի իրենց տունը: Հենց ալդ ժամանակ Շարիբանը պարանի ողակը զցում եւ առյուծի վիզը: Առյուծն ինչքան չարչարվում ե, չի կարողանում ալես ողակից ազատվել:

Առավտը թագավորի զինվորները տեսնելով առյուծին բռնված, շնչակտուր գալիս հայտնում են ուրախ լուրը:

— Ով թագավոր, այս զիշեր Ալի-աղան առյուծին բռնել ե:

Թագավորն ասում ե.

— Գնացեք, Ալի-աղային կանչեցեք ինձ մոտ:

Ցերք նրանք գնում են Ալի-աղային կանչելու, Շարիբանն ասում ե.

— Ցերեկ յերեկուան քիչ եր մնացել առյուծն իմ Ալիին պատառուեր, բայց չե, Ալի-աղան նրան հաղթեց, բերեց կապից ոյունին:

Այդ զեպքից հետո Ալի-աղայի անունը, վորպես քաջ փահեանի՝ շատ եր բարձրանում: Թագավորն Ալի-աղային իր քաջութան համար լավ վարձատրում եւ ասում, գնա լավ ապրի:

Անցնում ե մի քանի որ, թագավորը նորից կանչում ե Ալի-աղային իր մոտ ե ասում.

— Ալի-աղա, մի արջ ե մեր անտառում յերեացել, դու պետք ե գնաս, այդ արջին բռնես, բերես:

Ալանավերակը դուրս ե գալիս, լաց լինելով գնում տուն, Շարիբանին ասում:

— Կնիկ, տունդ քանդվի, լես ձի նստել չգիտեմ, ինչպես պիտի գնամ անտառ արջին բռնեմ, բերեմ:

Շարիբանն ասում ե.

— Տնաշեն, ինչ ես մտածում, գնա թագավորից զինվոր պահանջի, դու նրանց մեծը կլինես, նրանք արջին թող սպանեն, քո անունը դուրս գա վորպես փահեան:

Առավտայն Ալանավերակին տալիս են մի լավ ձի, վոր վրան նստի, տալիս են հարյուր քաջ ձիավոր ու ճանապարհ են գցում: Ալանավերակը չի կարողանում իրեն ձիու վրա պահել, հա որորվում ե: Զինվորներն ասում են, «Աչք չտալու համար ե այդպես անում»:

Հենց վոր զինվորները տեսնում են արջին, ընկնում եր նրա յետեից: Ալանավերակը վախից փախչում ե ու ինքն իրեն մտածում: «Այս վոչ թագավորի մոտ կդնամ, վոչ ել կնոջս մոտա»: Իր ձին կապում ե մի ծառի և ինքն ել բարձրանում ե ծառի գլուխը: Զինվորներն արջին շատ են հետապնդում, դու մի ասա այդ ծառի տակ արջի վորչն ե լինում: Զինվորներն ընկնում են արջի յետեից, արջն ել զալիս ե ուղիղ այդ ծառի տակ, վորի վրա Ալանավերակն ե լինում: Ալանավերակը տեսնելով արջը զեպի ծառն ե գալիս՝ վախից դսդում ե, չի կարողանում իրեն պահել ու թըրըմփ-ընկնում ե արջի զինին: Ալանավերակը սաստիկ վախից արջի ականջները պինդ բռնած, բաց չի թողնում: Զինվորները վրա յեն համառն, ձիերից իշնում, արջին սպանում: Հետո զինվորներն իրար ասում են.

— Ալի-աղան ե քաջ ե գիտուն: Մեզնից վոր մեկը կմտածեր, թե արջը կգա այս ծառի տակ: Իսկ Ալի-աղան այդ առաջուց զիտեր:

Զինվորները գնում, թագավորին լուր են ասնում,

թե Ալի-աղան և քաջ եւ և գիտուն։ Ինչպես պատահել եր
անտառում դեպքը, այնպես ել թագավորին պատմում են։

Թաղավորն Ալի-աղայի ոռնիկը բարձրացնում եւ։

Որերից մի որ թագավորը նորից կանչում եւ Ալի-ա-
ղային ու ասում։

— Ալի-աղա, մի թագավոր իմ դեմ կոփվ եւ լեկել,
յես քեզ հինգ հարյուր լավ ձիավոր կտամ, պետք եւ պնաս
նրա հետ կովես։

Վախից Ալանավերակի թուրը չորանում եւ, տուն ե
գնում, կող մոտ լաց լինում, ասում։

— Աստված տունդ քանդի, յերանի յես յոթ տարի
մուրացկանություն անեյի, համա փահեան անունը չունե-
նայի, հիմա յես ինչպես զնամ կոփվ։

Կինն ասում եւ։

— Հեչ մի մտածի, հինգ հարյուր լավ ձիավոր վերց-
րու, դու կը նրանց մեծը, նրանք կկովեն, քո անունը
դուրս կդա վորպես փահեան։

Ալանավերակն ասում եւ։

— Այ կնիկ, այլիս ինձնից քեզ խեր չկա, վեր կաց
մի քանի գաթա թխի, քո պատկերն ել վրաննախշիր, ինձ
տուր, յես գիտեմ, ել հետ չեմ գառնալու։

Առավոտյան թագավորը զորքին հավաքում եւ ասում։

— Ալի-աղան ինչ վոր ասի, դուք այնպես պիտի ա-
նեք։ Ալի-աղան ձիուց իջնի, դուք ել ձիերից իջեք, Ալի-
աղան հեծնի, դուք ել հեծեք։ Ամեն տեղ Ալի-աղային հե-
տեվեցեք։

Ալանավերակը հաղիվ եւ կարողանում իրեն թամբի
վրա պահել։ Առաջ եւ ընկնում, զնում եւ մի գետի ափ
հասնում։ Գետի մոտ ձիերից իջնում, նստում են։ Թշնամու-
րանակն ել զալիս եւ գետի մյուս կողմը բռնում։

Յերկու բանակներն ել պատրաստվում են հարձակ-
վելու։

Ալանավերակը ջրի ափին յեղեգ եւ հավաքում, զցում
ջրի յերեսը, ասում եւ, յերանի այն ժամանակ, յերբ յես
յեղեգից կողովներ ելի պատրաստում։

Ինչպես թագավորը հրամայել եր, Ալանավերակի հինգ
հարյուր զինվորները նույնպես վեր են կենում, յեղեգ քա-
զում ու զցում ջրի յերեսը։ Զուրը յեղեգը քշում տանուա
ե մի մեծ քարի դեմ անում, ու դրանով կամուրջ ե գո-
յանում։ Ալանավերակը դնում ե մի թագուն տեղ նստում,
իր գաթան հանում, դնում առջեր վոր ուտի։ Լաց ե լի-
նում, ասում.սա իմ կնոջ պատկերն ե, ով գիտի ել տես-
նեմ թե չե։ Այդ ժամանակ վորտեղից վորտեղ մի շուն են
մյուս ափից գալիս ե գաթան Ալի-աղայի առջեից փախցը-
նում։ Ալանավերակը թուրը վերցրած ընկնում ե շան լե-
տեվից։ Զինվորներն ել Ալի-աղայի արարքին են հետեւում,
թրերը վերցրած նրանք ել են վազում։ Ալանավերակը յերբ
վոր կամբջի վրայից անցնում ե հակառակորդի բանակի
կողմը, զինվորները նույնպես անցնում են ու հարձակվում
են—հակառակորդին ջախջախում, վշշում։ Ալանավերակը
թուրը ձեռին հա շան հետեւից ե վազում։ Զինվորներն
այդ վոր տեսնում են, իրար ասում են։

— Տղերք, տեսեք Ալի-աղան ինչպես ե բարկացել,
վոր չի ուզում թշնամու բանակից մի շուն ել կենդանի մաս։
Հետո մոտենում են Ալանավերակին ու ասում։

— Ալի-աղա, մենք քեզ մատաղ սիրտդ լեն պահիր,
մենք բոլորին հաղթեցինք։ Ապա զինվորներից մեկը հաս-
նում ե թրի մի հարվածով շանը սպանում։ Այդ ժամանակ
Ալանավերակը բացականչում եւ։

— Ոխայ, ալֆմ միայն սիրտս հովացավ։
Նըանք վերադառնում են թագավորին լուր բերում։
— Ալի-աղան մի ասեք, թոփ ու կրակ ամեք։ Ալի-
աղան հաղթեց թշնամու վողջ բանակին։

Թագավորը հրաման ե զըում, Ալի-աղային աշխարհի
ամենավորեղ փահեանն ե հարտարում։

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԹԱԳԱՎՈՐԸ ԴԱՐՁԱՎ ԱՂՎԵՍ, ՎԵԶԻՌԸ ԹԱԶԻ

Հինում ե մի վորսորդ, անունը՝ Թեմուրի Նա ունենում ե մի պառավ մայր:

Մի որ Թեմուրը գնում ե վորսի և ծովի ափին մի զեղեցիկ կենդանու յե հանդիպում: Թեմուրը թագնվում ե, նշան բանում ու մի գնդակով այդ զեղեցիկ կենդանուն սպանում: Վեր ե կենում եղ կենդանու մորթին քերթում, ուսին գցած վերադառնում դեպի տուն: Ճանապարհին հանդիպում ե նրան թագավորի վեղիրը:

Վեղիրն ասում ե.

— Թեմուր այդ մորթին ինձ տուր:

Թեմուրը չի տալիս:

— Լավ, չես մարսի, — ասում ե վեղիրը:

Թեմուրը գալիս ե տուն: Պառավ մալրն ասում ե,

— Թեմուր, եղ մորթին իսկի տեսնող չեղավ:

— Մայրիկ, վալահ, թագավորի վեղիրը տեսավ:

— Ե, ինչ ասայ:

— Ասաց իսձ տուր, իսկ յես չտվեցի:

— Լառ, վալահ, զու կմասսիս նրա ձեռքից:

Մայր ու վորդի նստում են տիպուր արտօւմ ստածում:

Վեղիրը գնում ե թագավորի պարսու և ասում.

— Թագավորն ապրած կենա, Թեմուրը մի մորթի յե բերել, վորը միայն քո ընդունարանին ե սազական:

— Լավ, ասում ե թագավորը, ինձ մոտ կանչեք Թեմուրին:

Թագավորի յերկու ծառաները գնում են Թեմուրի յեսեից: Թեմուրը մորթին վերցրած գալիս ե թագավորի մոտ
— Լառ, — ասում ե թագավորը՝ ինչ տամ քո մորթուն:
— Թագավորն ապրած կենա, — ասում ե նա, — ինչ
ել վոր տաս յես հոժար եմ:

— Թագավորը հարցնում ե իր վեղիրին, թե՝ ինչ
տան Թեմուրին:

— Թագավորն ապրած կենա, — ասում ե վեղիրը, —
Թեմուրը վորսորդ ե, մի պարկ վառող տուր նրան, վոր
վորսորդություն անի:

Թագավորը մի պարկ վառող ե տալիս Թեմուրին,
Թեմուրը վերցնում, գնում ե տուն:

Մի քանի որ հետո վեղիրը թագավորին ասում ե,
— Ըստունարանդ լավ ե, զեղեցիկ մորթի ել յեղավ.
հիմի փղոսկըներ են պետք, վոր նրանցով պատերը զարդարենք:

— Վեղիր, — ասում ե թագավորը, — հապա ո՞վ կարող
ե փղոսկը ճարել:

— Թագավորն ապրած կենա, — ասում ե վեղիրը, —
նա, ով մորթի յե բերել, նա ել փղոսկը կարող ե ճարել:

Թագավորն իր յերկու ծառաներին նորից ուղարկում
ե Թեմուրի յետկից:

— Թեմուր, — ասում ե թագավորը, — դու պետք ե այժմ
ինձ համար փղոսկը ճարել:

Թեմուրը վերադառնում ե տուն, մորն ասում:

— Մայրիկ, յես ինչքան փղոսկը պիտի ճարեմ, վոր
թագավորի ընդունարանի պատերը զարգարեն նրանցով:

Մայրն ասում ե Թեմուրին.

— Յես դիտեմ այս ամբողջը վեղիրի սարքածն ե,
վեղիրն իր վրեժն ե հանում քեզանից, բայց վոչինչ, մի
մտածի: Գնա թագավորի մոտ, ասա, քառասուն կացնավոր
եմ ուղում, քաղասուն տիկ գինի, քառասուն վուլթ աղ:

Թեմուրը գնում ե թագավորի մոտ, ասում.

— Թագավորն ապրած կենա, քառասուն կացնավոր եմ ուղում, քառասուն տիկ գինի, քառասուն փութ աղ:

Թագավորը վեզիրին հրամայում ե Թեմուրի պահանջը կատարել:

Թեմուրն ել ամբողջը վերցնում, գնում ե մի բարձր սարի գլուխ: Այդ քառասուն փութ աղը լցնում ե աղբուրների մեջ, աղբյուրները ցամաքում են: Այդ քառասուն տիկ գինին ել լցնում ե ավագանների մեջ: Քառասուն կացնավորներն ել թագստոցներում պահում:

Կեսորին սարսափելի շոգ ե լինում: Փղերը ծարավում են, հավաքվում, գալիս են աղբյուրներից ջուր խմելու: Գալիս են, տեսնում աղբյուրները ցամաքած: Գնում են ավագանների մեջ յեղած գինին ամբողջովին ծծում: Բոլորն ել հարբում են, տեղն ու տեղը ընկնում գետնին:

Այդ ժամանակ քառասուն կացնավորները դուրս են գալիս իրենց թագստոցներից եղ փղերին մորթում են, քառասուն ձիու բեռ բարձում փղոսկրներով ու բերում, թագավորին նվեր:

Թագավորը վարպետներ ե հրավիրում, վոր պատերը դարձարեն: Վարպետները փղոսկրներից թագավորի ընդունարանի պատերը զարդարում են:

Յերեկոյան պալատականները հավաքվում են նոր սարքած ընդունարանում ու զարմանում պատերի գեղեցկությամբ:

— Թագավորն ապրած կենա, — ասում ե վեզիրը, — շնորհագոր լինի, ընդունարանգ, լավ ե, բայց յեթե վիշապի գլխի ջան ել լինի այստեղ, այն ժամանակ քո ընդունարանն ավելի շքնդ կլինի:

Թագավորն ասում ե.

— Վեզիր, ասա, ով կարող է բերել վիշապի գլխի վերեկի աննման ջանը:

— Թագավորն ապրած կենա, — ասում ե վեզիրը, — ով վոր վղոսկրները ճարեց, նա ել կարող է վիշապի գլխի աննման ջանը բերել:

Թագավորը մարդ ե ուղարկում Թեմուրին կանչել տալիս:

— Թեմուր, զու պետք ե գնաս, վիշապի գլխի վերեկի աննման ջանը բերես, — ասում ե թագավորը:

Թեմուրը տխուր-տրտում վերադառնում ե իր պառակ մոր մոտ: Մայրն ասում ե,

— Թեմուր, լառ, ինչո՞ւ յես այդպես տխուր:

— Թագավորն ինձ հանգիստ չի տալիս, — պատասխանում ե վորդին, — հիմի ել ինձ ուղարկում ե վիշապի գլխի վերեկի աննման ջանը բերելու:

— Լառ, — ասում ե մայրը: — զիտեմ, վեզիրի սարքած գործն ե այդ, հիմի լսիր ինձ: Ջանը բերելու համար պետք ե գնաս քառասուն քուռակ ունեցող զամբիկը բերես: Յեվ պառակ մայրը սովորեցնում ե Թեմուրին, թե ինչպես զամբիկին բռնի:

Թեմուրը վեր ե կենում, զնում մի բարձր սարի գլուխ, աղբյուրի մոտի խոտերի մեջ պահպատ:

Ամառ ե լինում, շոգ որ, զամբիկն իր քուռակների հետ միասին գալիս ե այդ աղբյուրից ջուր խմելու: Ջամբիկը ջուրը խմում ե ու պակում խոտերի մեջ հանգըստանալու: Թեմուրն այդ ժամանակ դուրս ե գալիս խոտերի միջից զամբիկին բռնում ե, իր քառասուն քուռակների հետ բերում տուն:

— Մայրիկ, հիմի ինչպես պիտի գնամ վիշապի գլխի վերեկի աննման ջանը բերեմ, — հարցնում ե Թեմուրը:

— Թեմուրս, — ասում ե մայրը, — վիշապը քառասուն որ արթուն ե լինում, քառասուն որ քնած, զու զամբիկին հեծիր, գնա, վիշապն այժմ քնած կլինի: Յերբ վոր հասնես վիշապին, ձեռքդ ցցիր ջանի ողակներին և զամ-

թիվին պինդ ասուանդակիր, թող թոչի: Վիշտապը կոկոի
զոռար, վիշտապի շնչից կրակ կթոչի, զամբիկը քեզ հրե-
ղենի պես կթոցնի ու ջահը կբերես թագավորին կտաս:

Թեմուրը վեր ե կենում, պատրաստություն ե տես-
նում, ճանապարհ ե ընկնում, գնում հասնում ե վիշտապի
հողը: Հասնում ե, տեսնում՝ ճիշտ վոր վիշտապը քնած ե,
ու նրա գլխի վերե կա մի աննման գեղեցիկ ջահ,
վոր արևի պես լույս ե սփռում չորս կողմը: Թեմուրը
զամբիկի վազքի ընթացքում ձեռքը դցում ե ջահի
ողակներին. Ջահը պոկվում ե վիշտապի գլխավերելից: Վի-
շտապը զարթնում գոռում ե, նրա շնչից բոց ե բարձրա-
նում, սկսում ե գետինը վառվեր: Բայց զամբիկը Թե-
մուրին աղատում, բերում ե տուն:

Թեմուրը զամբիկի աչքերը համբուրում ե և բաց
թողնում: Թեմուրը ջահը բերում տալիս ե թագավորին:

Յերեկոյան պարատականները գալիս, հավաքվում—
են թագավորի ընդունարանում և ինչ են տեսնում—
աշխարհի ամենագեղեցիկ մորթին վոտքերի տակ փոած,
պատերը փղոսկրից, աննման ջահն ել մեջտեղում կախած՝
լույս ե տալիս արևի պես: Յյուրերը հիացած, վոչ ու-
տում են, վոչ խմում, միայն ընդունարանն են դիտում:
Վեզիրն ասում ե:

— Թագավոր, չնորհավոր լինի, ամեն ինչ լավ ե,
միայն մի բան ե պակաս: Յեթե Ուշանդի շահի աղ-
ջիկը լինի, վոր քեզ կնություն անի, ամեն ինչ լրիվ
կլինի:

Թագավորն ասում ե վեզիրին.

— Ում ուղարկենք, վոր Ուշանդի շահի աղջիկը
բերի:

— Թագավորն ապրած կենա, — ասում ե վեզիրը,—
ով վոր այս ամենը բերել ե, թող նա ել զնա Ուշանդի
շահի աղջիկը բերի:

Թագավորն ասում ե իր ծառաներին.

— Շուտ գնացեք, Թեմուրին կանչեք ինձ մոտ.

— Թեմուրը գալիս ե թագավորի ընդունարանը,
բարեկում, ասում.

— Ի՞նչ կցանկանաք:

Թագավորն ասում ե.

— Պետք ե զնաս Ուշանդի շահի աղջիկը բերեա
ինձ համար:

Թեմուրը գալիս ե տուն, մոր մոտ, լաց ե լինում,
տում.

— Հիմի ել թագավորի հրամանով պետք ե զնամ
Ուշանդի շահի աղջիկը բերեմ:

— Լատ,—ասում ե մայրը,—զնա թագավորի մոտ,
ասա՝ քեզնից ուզում եմ քառասուն նավ, քառասուն գնոլ-
դուռնաչի, քառասուն աղջիկ, քառասուն տղա, քառա-
սուն բեռ ապրանք, ամենաթանգարժեք կտորեղեններով:
Այն ժամանակ յետ կղնամ. Ուշանդի շահի աղջկանը բե-
րելու:

Թեմուրը գնում ե թագավորի մոտ, ասում.

— Թագավորն ապրած կենա, քեզանից ուզում եմ
քառասուն նավ, քառասուն գնոլ-զուռնաչի, քառասուն
աղջիկ, քառասուն տղա, քառասուն բեռ ապրանք՝ ամե-
նաթանգարժեք կտորեղեններով, այն ժամանակ յետ
կղնամ. Ուշանդի շահի աղջիկը բերելու:

Թագավորը հրամայում ե վեզիրին՝ այդ բոլորը
պատրաստել:

Թեմուրը նավերը լցրած ուղևորվում ե զեղի Ու-
շանդի շահի քաղաքը: Նավերը գնում քաղաքի նավա-
հանգստում կանգ են առնում: Այդ քառասուն գնոլ-զուռն-
աչին սկսում են նվազել քառասուն տղան, քառասուն
աղջիկները դուրս են գալիս ծովի ափին սկսում են պա-
րել, քեֆուրախություն աներ:

Հուը են տալիս Ռւշանգի շահի աղջկան, թե՝ զեր
կաց, գուրս արի քո քոշի կտուրը, տես աշխարհում
ինչ կա, ինչ չկա:

Ռւշանգի շահի աղջիկը նայում է տեսնում տղաները
մի կողմ են պարում, աղջիկները մի կողմ քառասուն
դժուղուռնաշխներն ել մի կողմ կանգնած նվազում են:
Թեմուրն ել ամբողջ ապրանքը գուրս ե բերել ու ձրի
քաֆանում է ժողովրդին:

Ռւշանգի շահի աղջիկը զնում է հոր մոտ, խնդրում.

— Հայրիկ, թույլ տուր զնամ ծովափ, թամաշա անեմ:

Հայրը թույլ է տալիս: Ռւշանգի շահի աղջիկը քա-
ռասուն աղջիկ հավաքած դալիս է նավերին թամաշա
անելու:

Ռւշանգի շահի աղջկա անունը Գուլիարի եր:

Թեմուրն այդ ժամանակ Ռւշանգի շահի աղջկան
հրավիրում է իր նավը: Յերբ Ռւշանգի շահի աղջիկը նավ
է մտնում, Թեմուրը հրամայում է նավերին՝ ճանապարհ
ընկնել:

Ռւշանգի շահի մարդիկ սկսում են նրանց հետա-
պնդել, բայց արգեն ուշ է լինում, Թեմուրի նավերը
շատ են հեռացած լինում:

— Ռւշանգի շահի աղջիկը հանկարծ նկատում է, զոր
իրենք ափից շատ են հեռացել: Նա կախարդ է լինում,
այնպես և անում, զոր նավերի խարիսխներն իջնում են
ծովի հատակը, նավերը կանգ են առնում: Նավորդ-
ները անհանգստանում են, չեն իմանում, թե ինչո՞ւ այդ-
պես յեղափ:

Թեմուրը զնում է Ռւշանգի շահի աղջկա մոտ:

Ռւշանգի շահի աղջիկը ասում է.

— Այս ինչ բերիր զու իմ զլիխն:

Թեմուրն ասում է.

— Թագավորն է հրամայել զոր քեզ տանեմ նրա

համար: Յես ինչ մեղք ունեմ: Ու պատմում է իր զլիխ
վողջ յեկածը:

— Թեմուր, յես տեսնում եմ, զոր զու մեղավար
չես: Վոր եղանակ ե, — ասում է Գուլիարին, նավերը թող
շարժվեն, բայց մենք յերբ տեղ հասնենք, մարդ ուզար-
կիր թագավորի յետեից, թող ինքն ու իր վեղիրը գան
մեղ զիմավորելու:

Նավերը զալիս են թագավորի քաղաքը, ծովափին
կանգնում: Տղաները, աղջիկները, դուշգուռնաշխները
զուրս են զալիս, ուրախանում, պարում: Թեմուրն ել
մարդիկ և ուզարկում թագավորի մոտ, հայտնելու, զոր
իր պալատականներով զա ծովափ՝ Ռւշանգի շահի աղջկան
զիմավորելու:

Թագավորն իր մեծամեծներով, վեզիր-պալատական-
ներով զալիս է ծովափ՝ Ռւշանգի շահի աղջկան զիմա-
վորելու:

Ռւշանգի շահի աղջիկը թագավորին անիծում է,
ասում:

— Թագավոր, զու լինես մի աղվես, վեզիր զու ել
լինես մի թագի: Թող թագավորը փախչի, վեզիրն ել
նրան հետապնդի, թող ժողովուրդն ել տափ.

— Հա ջան, հա ջան:

Ասեց-չասեց՝ մին ել տեսան թագավորը դարձավ
մի աղվես, իսկ վեզիրը՝ թագի ու փախան:

Թեմուրն ու Ռւշանգի շահի աղջիկ Գուլիարին ի-
րաք ուզեցին, յոթ որ, յոթ զիշեր հարսանիք արին:

Թեմուրն իր պառակ մորն ել բերեց իրենց մոտ և
ուրախ ապրեցին:

Բարին եստեղ, չարն աղվես-թագավորի և թագի-
վեզը մոտ:

ԴԱՌԻԴԵ ՍԱՄՍՈՒՆԵ

(ՔՐԴԱԿԱՆ ՎԱՐՒԱԾ)

Սամսունը կառավարում է Հոհան, իսկ Դառողը նրա յեղբոր տղան եր: Դառողը փոքր եր: Սամսունն ինչքան սահմաններ ուներ, Հոհանն եր իշխում այդ բոլորի վրա:

Մելիքը Մըսրումն եր, Մըսրի քաջ մարդն եր համար- վում, ինչ կար չկար՝ Մելիքի ձեռքումն եր: Բաց Մելիքն ինչ անում եր չեր անում, չեր կարողանում Սամսունը վերցնել իր ձեռքի տևկի:

Մըսր-Մելիքը մի տղա ուներ: Մի որ նրա տղան շու- կայից գտվիս եր, նայեց, տեսավ մի խուժը յերեխաններ իրենց համար խաղում են: Մըսր-Մելիքի տղան ախտեղ մի տղայի ծեծեց:

Տղան հայր չուներ, նրա մայրը պառավ եր: Տղան լաց յեղափ, գնաց իր մոր մոտ: Մայրը նրան ասաց.

— Ինչու յես լավիս:

— Մըսր-Մելիքի տղան ինձ ծեծեց:

Պառավն իր տղայի թերեց բռնեց, բերեց Մըսր-Մելիքի մոտ, ասաց:

— Դու ուժեղ ես, զու Մըսրի զոշադն ես, քու տղան ել գտոել ե զոչազ: Յեթե յերկուսդ ել ուժեղ եք, ինչու չեք գնում Հոհանի Սամսունը զցում ձեր ձեռքը: Իմ խեղճ տղային եք ծեծում, մենք խեղճ ենք, ձեր ուժը մեք վրա յե գնում:

Այս խոսրի վրա Մըսր-Մելիքը լոեց: Նրա յերեք հար- յուր վաթսուն վեց յերակներն իրենց տեղում կանգնեցին, նրա բարկությունը յեկավ, նրա ուժն իր տեղը յեկավ, աչքերն արյունով լցվեցին, այլևս պառավին վոչինչ չասաց,



վերագարձավ իր տունը և պատրաստություն տեսավ, հրամայեց Մըսրա բնակիչներին.

— Զահել, ծերունի ու պառավ, ով վոր կարող ե զագանակ վերցնել, ում ծնկներում ուժ կա, ով կարող ե ճանապարհ գնալ, պատրաստվեցեք, զենք-զրահով, շաղր-վրաներով, մենք գնում ենք Սամսունի վրա, կամ Հոհան պիտի Մըսրն ինձնից վերցնի, կամ յես պիտի Սամսունը նրանից վերցնեմ:

Հրամանը վոր դուրս յեկավ՝ յերեխա, ծերունի, պառավ, ով վոր կարող եր զագանակ վերցնել, պատրաստություն տեսան, իրենց չաղր-վրանները վերցրին, մեծ բանկով զնացին գետի Սամսունի սահմանը:

Մի ջուր եր գալիս և մասնում Սամսուն։ Մըսր-Մելքը հրամայեց այդ ջուրը կտրել։ Իրենց չաղր-վրաններն ամրացրին աւգուեց։ Մըսր-Մելքիքի վրանն առանձին խփեցին, բանակից քիչ հեռու։ Մըսր-Մելքիքն յոթնոր քնում եր, յոթն որ արթուն եր մնում։ Թող Մըսր-Մելքիքը վրանում քնի, թող դորքն ել սպասի. քաղաքի ջուրը թող կարած մնա:

Մենք Սամսունից խոսենք։ Սամսունի բնակիչները տեսան ջուրը ցամաքեց, ծարավեցին, իրար անցան։ Յերկու մարդ ուղարկեցին, վոր ջրի ցամաքելու պատճառն իժանան, տեսնեն, թե ինչո՞ւ իրենց ջուրը չի գալիս։ Նրանք յերբ ջրի ակունքին նայեցին, տեսան յերկնօրի աստղերին հաշիվ կա, չաղր-վրաններին հաշիվ չկա։ Հոհանին լուր բերին։ Հոհանը գնաց յելավ մի բլրակի վրա, նայեց, տեսավ վոր ճիշտ եր բնակիչների խոսքը։

Հոհանը շատ վախեցավ, շատ խեղճացավ, բնակիչներին ասաց.

— Գնացեք ներս, դոները ձեր վրա փակեք, սա Մըսր-Մելքիքի զորքն ե, մեր վերջը յեկել ե, մեր քոքը կկարեն։

Հոհանը ներս գնաց, դուռն իր վրա փակեց։

Դառնդը ջահել եր, չափում եր Սամսունի սարն ու քարը։ Սամսունի բնակիչներն ասին. «Մենք ծարավ ենք»։ Դառնդը յետ դառավ, իր հորյեղբար Հոհանին ասաց.

— Դու ինչո՞ւ յես ներս մտել, ժողովուրդը ծարավ ե, ջուր ե ուզում։

— Իմ ուժից վեր ե, յես չեմ կարող ջուր բերել— ասաց Հոհանը։

Դառնդը գնաց տուն, իր ղենջն ու զրահը կապեց, Հոհանի ծին քաշեց զուրս, հեծավ, քշեց Մըսր-Մելքիքի զորքի մեջ։ Նայեց, մի ծերունի բանակի մի կողմում կանգնել եր, նրանից հարցըց, ասաց.

— Պապիկ չան, ասա, սա ինչ զորք ե, ինչ հարայ- երոց ե, ինչ կոխի ե, ինչ աղմուկ աղաղակ ե։

Մերունին ասաց.

— Մըսր-Մելքիքի զորքն ե, յեկել ե Սամսունը զավթի, Հոհանին զցի իր ձեռքի տակ։

— Հիմի Մըսր-Մելքիքը վորանեղ ե, — ասաց Դառնդը։

— Ան առանձին վրանը Մըսր-Մելքիքի վրանն ե, — պատասխանեց ծերունին։

— Պետք ե յես գնամ Մըսր-Մելքիքին տեսնեմ։

— Ի՞նչ գործ ունես նրա հետ, Մըսր-Մելքիքը յոթ որ քնում ե, յոթ որ արթուն ե մնում, այսոր յերեք որ ե քնել ե, չորս որ ե մնացել, վոր զարթնի։

Դառնդն ասաց.

— Յես յեկել եմ նրա քունը խանդարեմ։

Մերունին ասաց.

— Դու չես կարող նրա զեմ կովել։ Թե դու գնաս նրա վրանի դռան մոտ, Մըսր-Մելքիքն իր շունչը թողնի՝ դու կթոշես, լեռներին կկպչես, իսկ թե իր շունչը հետ քաշի՝ ճանձի նման դու կդնաս նրա բերնին կկպչես։

Մերունին Մըսր-Մելքիքից շատ եր վախեցել, կարծում եր նրանից ուժեղը չկա։

Դասուդը շատ վիրավորվեց, նրա յերեք հարյուր վաթ-
առն վեց յերակներն ուժով լցվեցին, ձիու կողքերին խփեց:
Զին քշեց գնաց Մըսր-Մելիքի գուան դեմ կանգնեց:
Մըսր-Մելիքը քնած եր, Ահեղ ձայնով նրա անունը
տվեց:

Մըսր-Մելիքը քնից վեր կացավ, կանգնեց ասաց.
— Դու ով ես, վոր իմ քունը խանգարեցիր,
— Ես Դառւդն եմ, իսկ դու ով ես, վոր Սամսունի
Հուրը կտրել ես:

— Ես Մըսր-Մելիքն եմ.—ասաց,—յես՝ յեկել եմ
ձեր հալը հարցնեմ, ասել ե՝ ձեզ հետ կովելու:

Մըսր-Մելիքը թուրը վերցրեց, վրանից դուրս յեկավ,
սկսեց Դառւդի հետ կովել, համա ինչ արեց-չարեց, մա-
շալլա Դառւդին, չկարողացավ հաղթել: Հետո Դառւդի դեմ
կանգնեց, ասաց.

— Դառւդ, քեզ պեսներին մարդ իր հացով պատփում
ե, հետո նրա հետ կովում, ձիուց իջիր, իմ մի պրտուճ
հացը կեր, հետո յես ու դու ելի կովենք:
Դառւդն ասաց.

— Զե, յես չեմ իջնի, քեզ պեսների հացը չեմ ուտի
դու մուխանաթ ես, իմ կովիք կոփի ե:

Յոթն որ Դառւդն ու Մըսր-Մելիքը կովեցին: Մըսր-
Մելիքը տեսավ Դառւդին չի կարող հաղթել, Դառւդը պիտի
սպանի իրեն, ասաց.

— Դառւդ, զիշերազոր հագիս ե, սպասիր, գնած
պատերազմական շորերս հագնեմ, զամ:

Մըսր-Մելիքը գնաց ներս, վրանի դուռը փակեց, յոթ
գոմշի կաշի հագավ, վրայից գենք ու զրահ կապեց դուքս
յեկավ Դառւդի հետ կոփի: Դառւդի բարկությունը յեկավ,
ճակտի յերակները բարձրացան: Դառւդը մեկ անգամ ձին
քշեց, գնաց նրա զորքի մոտով, այս կողմից կայծակի ո-
բագությամբ յետ յեկավ, թուրը Մըսր-Մելիքի մեջտեղը

խփեց: Թուրը Մըսր-Մելիքին մեջտեղից կիսեց յերկու
մասի ու գետնի տակ թաղվեց կորավ: Դառւդը Մըսրա
ամբողջ բնակիչներին իրեն յենթարկեց: Սամսունի ջուրը
բաց թողեց, յեկավ իր հորյեղբայր Հոհանին ասաց.

— Մըսր-Մելիքն ինչ եր, վոր դու նրանից վախենում
եյիր: Ինչու յես ներս մտել, դուռը վրադ փակել իւս
Մըսրա ամբողջ ժողովրդին քեզ յենթարկեցի: Դե վեր կաց,
դուրս արի, դուռը բաց:

Սամսունի ժողովուրդը հավաքվեց, ասաց.

— Մենք չենք ուզում հոհանը մեզ կառավարի, մեջ
յերեխաները վոչնչանան: Նա չի կարող մեզ նեղությունից
ազատել, մեզ տիրություն անել, թող Դառւդը հոհանի տեղ
նստի:

Դառւդին Հոհանի տեղը դրեցին: Դառւդը սկսեց Սամ-
սունին և Մըսրին տիրություն անել:



1940

Ց Ա. Կ Ե Լ

1. Յերկու աղվես	3
2. Աղվեսն ու առյուծը	4
3. Աղվեսի վկայականը	7
4. Քպրքանուն	8
5. Ալանավերակ	14
7. Թե ինչպես թագավորը դարձավ աղվես, վեզիրը՝ թագի	20						
8. Դառւդե Սամսունե (Սհմբ Զոլոյի պատմածից)	28

Շապիկը և իլյուստրացիաները՝
Նկարիչ Արտաս Բերգենգրինի

Պատ-խմբագիր՝ Արաքս
Տեխ-խմբագիր՝ Սա. Ալբու Յան
Մրգագիր՝ Մ. Թումանյան

Վ.Ֆ. 1051 Հրատ. 5363.

Պատվեր 730. Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 14/X—1940 թ.

Սոորագրված է տպագրության 14/XII—1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Խնկնի, 85

ՀՀ Ազգային գրադարան



NL0398767

2447

the In.